

# ԱՆԱԶԱՌՈՒԹԵԱՆ ԱՍՊԵՏՆԵՐԸ

Գրեց՝ Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

## I

Հայ պատմագրութիւնը հարստացաւ մեծահատոր աշխատութեամբ մը: Նոր լոյս տեսաւ Վենետիկի Ս. Ղազարու տպարանէն Դաւիթ Անանունի գրուածքը՝ «Ռուսահայերի Հասարակական Զարգացումը, հատոր երրորդ (1910-1918), մեծադիր, 694 էջ:

Նոյնքան ծաւալուն, որքան Լէօի ծանօթ աշխատութիւնը «Անցեալից» խորագրով, որ նոյն հարցերը կը շօշափէ եւ որու մասին տւելինք արդէն մեր քննադատականը նոյն այս էջերում\*):

Այս մէկ գրքի հեղինակն ալ երկրացի է, կ'ապրի Հայաստանի մէջ, դաւանանքով բողջեւիկ է, այլ սոցիալ-դէմոկրատ, մենչեվիկ, նախկին պարագլուխ. ուղած է լոյս ընծայել իր աշխատութիւնը արտասահմանում, հայկական ուղղադրութեամբ, խոստովելու համար բոլշեվիկեան ուղղադրութեան այլանդակութիւններէն:

Լէօի գիրքը հրատարակեր է հայ սովէտական կառավարութիւնը. Դ. Անանուն ինքը կը հոգայ իր գրքի տպագրութեան ծախքը: Գոնէ այդպէս կ'ըսուի: Կ'ըսուի նաեւ, որ այդ գիրքը ազատօրէն պիտի մտնի Հայաստան եւ ազատօրէն պիտի տարածուի:

Հագուագիւտ առանձնաշնորհում մը հեղինակի համար... Բայց Երեւանի կառավարութիւնը ձրիարար, անչահախնդրօրէն չի տար նման առանձնաշնորհումներ եւ այս պարագային ալ գիտցեր է բաւական սուղ գնով ծախել իր ընձեռած արտօնութիւնը:

Երեւանի կառավարութեան համար հագուագիւտ բարիք մըն են այս քննադատ-պատմագիրները — Լէօ, Անանուն եւ ուրիշներ — որոնք լինելով ոչ-բոլշեվիկ ու նոյնիսկ սրտի խորքում հակաբոլշեվիկ, լինելով միաժամանակ հայ գրականութեան մէջ ծանօթ դէմքեր, կը փորձեն «առարկայօրէն», «գիտականօրէն»

վերլուծելու մեր նորագոյն պատմութիւնը, կ'ըբբրեն էջմիածնայ հարուստ արխիւները եւ... կը ջախջախեն այդ պատմութեան դիտար դերակատարները, անոր մեծագոյն ազդակը — հայ քաղաքական Կուսակցութիւնը:

Երեւանի վարիչները կը դուրդուրան այդ «չէղոք» պատմագիրներու վրայ, ամէն կերպ կը քաջալերեն անոնց պատմագիտական փորձերը, նոյնիսկ կը հանդուրժեն անոնց այս կամ այն ուրոյն ժեստը, ուրոյն, անկախ կարծիքները՝ փոխարէնը ստանալու համար Հ. Յ. Դաշնակցութեան վերջնական սնանկացումի ու փլուզումի վկայագիրներ:

Շտապենք, սակայն, յայտարարելու, որ մենք չենք դներ Լէօ եւ Անանուն միեւնոյն պարկի մէջ. երկրորդը իր անվիճելի առաւելութիւններն ունի առաջնի հանդէպ: Լէօ եղած է տասնեակ տարիներ — հայկական շարժման սկիզբէն ի վեր — հոգեկան սերտ ազդակցութեան մէջ «Դաշնակցութեան» հետ, բաժաներ է անոր հիմնական գաղափարները, ողբերուեր է անոր դրօշակով:

Դաւիթ Անանուն — շատ աւելի երիտասարդ, սոցիալ-դէմոկրատ եւ մարքսիստ — եթէ չենք սխալիր, միշտ ալ եղած է Դաշնակցութեան հակառակորդ եւ քսան տարիէ ի վեր, իր սակաւաթիւ ընկերներուն հետ, կենտրոնացուցած է իր ճիշդը՝ այդ կուսակցութիւնը քննադատելու եւ քարկոծելու մէջ: Այդպէս ըրած է, իբրեւ առաջնորդ վտիտ, լյրճուկ կուսակցութեան մը — բուռ մը մտաւորականներ եւ դործաւորներ — որ երբեք չկրցաւ արմատ բռնել հայ աշխարհում եւ միշտ ալ մերժուած մնաց հայկական իրականութենէն:

Ինչ որ կը պահանջենք Լէօէն, չէինք կըրնար պահանջել Անանունէն: Դեռ գոհ պիտի մնանք, որ մարքսիստ դատախազը իր քննադատութիւններն ու մեղադրանքները Դաշնակցութեան դէմ գէթ խմբագրած է քիչ թէ շատ վայելուչ տոնով, աւելի պաղարիւն եւ յամե-

\*) Տե՛ս «Հայրենիք» ամսագիր իմ «Ուշացած Մարգարէնները»: